ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
«ՈՍԿԵՀԱՍԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Մասնագիտացված կրթական աջակցությունների (ՄԿԱ) գծով փոխտնօրենի աշխատանքային պլան

2022-2023 ուստարի

փոխտնօրեն՝ Վարդանուշ Գասպարյան

Դաստիարակչական աշխատանքի խնդիրներն ու նպատակ 2022-2023 ուստարի

1. Ուսումնադաստիարակչական աշխատանքները նպատակամղել սովորողների հայեցի կրթությանն ու դաստիարակությանը: Սովորողներին հաղորդակից դարձնել Հայ ժողովրդի պատմությանը, հոգևոր մշակույթի արժեքներին:

2. Միջոցառումները նպատակամղել սովորողների հայրենասիրական զգացմունքների խթանման, բարոյական հատկանիշների ձևավորմանն ու զարգացմանը:

3. Դաստիարակության հիմնական միջոց համարել բարեգործությունը, փոխօգնությունը:

4. Զարգացնել յուրաքանչյուր սովորողի բնածին տաղանդը՝ արտադասարանական գործունեության միջոցով:

5. Արմատավորել ազգային խաղերն ու ավանդույթները:

6. Ծանոթացնել ժողովրդական բժշկությանը, հայկական խոհանոցին ու արհեստագործությանը:

7. Մրցույթ խաղերի միջոցով, հարստացնել սովորողների աշխարհայացքը, աշխարհընկալումն և երևույթների գիտական ընկալումը:

8. Դաստիարակել սեր հայրենի բնաշխարհի նկատմամբ:

9. Նպաստել աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը:

10. Աշխատանք տանել հասարակական կարգի անվտանգ երթևեկության, իրական նորմերի տարրական կանոնների ուսուցման ուղղությամբ:

11. Աշխատանք տաննել սովորողների գեղագիտական ճաշակի , եկեղեցիական ազգային հոգեբանության ուղղությամբ:

12. Մեծ տեղ տալ մյուս ժողովուրդների մշակութային ճանաչված արժեքներին, ժողովրդի լավագույն ներկայացուցիչների գործերին ու գործունեությանը, բանահյուսությանը, ժողավրդական արվեստի ծանոթանալուն և նրանց նկատմամբ սեր և հարգանք դաստիարակել նպատակին ուղղված միջոցառումների կազմակերպմանը:

Վերոհիշյալ խնդիրների իրականացման համար կարևորում ենք.

- ❖ Դասղեկ - աշակերտ - ծնող փոխհարաբերությունների ամրապնդումը
- ❖ Համադպրոցական միջոցառումների ապահովում
- ❖ Աշակերտական ինքնակառավարող օղակների ստեղծում
- ❖ Արտադասարանական խմբակներ
- ❖ Ղեկավար և սպասարկող անձնակազմ
  - տնօրեն, ուս. գծով փոխտնօրեն, գրադարանավար
- ❖ Պետական և հասարակական կառույցներ
  - ոստիկանություն (ոստիկանության անչափահասների գործերով աշխատակից)
  - հասարակական և միջազգային կազմակերպություններ

Աշխատանքային պլան

2022-2023 ուստարի

№	Աշխատանքի բովանդակություն	Ժամկետ	Կատարող անձ
1	Կազմակերպչական հարցեր: Հրավիրել դասղեկներին խորհրդակցության և ելնելով ազգային դպրոցի հիմնադրույթներից, դպրոցի ընձեռաց հնարավորություններից հատուկ պլանավորել դաստիարակության ողջ համակարգը:	ամբողջ տարվա ընթացքում	ԴԱԿ դասղեկներ
2	Ուստարվա հանդիսավոր տողանու անցկացում	սեպտեմբեր	ԴԱԿ դասղեկներ
3	Շաբաթօրյակների կազմակերպում:	ամբողջ տարվա ընթացքում	ԴԱԿ դասղեկներ
4	Ըստ նախասիրությունների ու հետաքրքրասիրությունների դպրոցի աշակերտներին ընդգրկել արտադասարանական խմբակներում:	ուստարվա սկզբին	մանկավարժական կազմով
5	Աշակերտների ազգային պահանջմունքների բավարարման և դրա միջոցով հայացքի դաստիարակության ապահովության նպատակով դպրոցում ստեղծել ազգային տոների կազմակերպման օրացույց և աշխատանք տանել դրանք արդյունավետ նշելու ուղղությամբ:	ուստարվա սկզբին	մանկավարժական կազմով
6	Պարզել բոլոր աշակերտների ընտանեկան պայմանները, նյութական ապահովության վիճակը:	ուստարվա սկզբին	փոխտնօրեն, դասղեկներ
7	Յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթվա ընթացքում լսել հաշվետվություն դասղեկ - դասվարների կատարած աշխատանքի վերաբերյալ	ամբողջ տարվա ընթացքում	փոխտնօրեն

8	Կազմել դաստիարակչական աշխատանքների կազմակերպման և վերահսկման գրաֆիկ և հետևել դրա իրականացմանը:	ուստարվա սկզբին	փոխտնօրեն, տնօրեն
9	Դպրոցում և դասարաններում ստեղծել ծնողական կոմիտեներ:	II շաբաթում	դասղեկներ, կազմակերպիչ
10	Ստուգել և հաստատել դասղեկ դասվարների աշխատանքային պլանները, որը կազմելիս մեծ տեղ հատկացնել սովորողների ազգային հայրենասիրական, բնապահպանական, խղճի ազատության աշխատանքային դաստիարակչությանը:	սեպտեմբեր	փոխտնօրեն, տնօրեն
11	Պարբերաբար ստուգել դասղեկի կատարած աշխատանքները, ցույց տալ գործնական օգնություն:	ամբողջ տարին	փոխտնօրեն